Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2.6
U - 50

[illegible]

2004

# Գ Ի Ր Ք

## ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՏՕՆԻՑ

## ԿԱՑՄԵՐԱԿԱՆԱՑ։

Շարակարգեալ ՚ի Սիմէօն Կաթուղիկոսէ ամենայն հայոց երեւան֊
ցւոյ՝ յաւելմամբք նորահնար շարականաց եւ աղօթից։

Յամի Տեառն 1771. յուլիսի 10.

Տպեալ երկրորդ անգամ։

՚Ի Հայրապետութեան Տեառն Եփրեմայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն հայոց.

Յամի Տեառն 1823. սեպտեմբերի 28.

՚Ի Թփխիզ Քաղաքի.

՚Ի Տպարանի աստուածաբանի հայոց ընծայեցելոյ ՚ի Բաղդասարենց Ոսկին Գէորգեայ
երեւանեան արծրունեաց վանեցւոյ վերանորոգեցելոյ ՚ի Թփխիզ։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

4751
38

5298-ած
1412-87

## Յառաջաբանութիւն Հեղինակին :

Եթէ հարկաւորեմք 'ի մէջ գրոց և մանաւանդ 'ի Սրբազան Առա-
քելոյն Պօղոսէ՝ աղօթել հաստատակամս վասն ամ Թագաւորաց:
Ապա որքան ևս հարկ է 'ի վերայ մեր աղօթել վասն քրիստոնէից Թա-
գաւորաց, որում անունն քրիստոսի փառաւորի. և մք խաչ նորին պայծա-
ռացեալ փայլէ ընդ ծագս տիեզերաց: Արդ եթէ այսպէս, ապա որքան և
որքանապատիկ հարկ է 'ի վերայ մեր, և որպէս պարտական եւս եմք աղօ-
թել մեծ մերոյս յաղթերախտի և խնամաշատի ամենազօրի քրիստոսապսակի,
գերահռչակ և պայծառ անուն ԵԿԱՏԱՐԻՆԷ Կայսերուհւոյն
Ռօսն ողորմութեան, որ իբրև զարեգակն փայլէ ընդ արեգակնափայլ Արքայ
որդւոյն իւրոյ ՊԱՒԼ ՊԵՏՐՈՎԻՉԻՆ. և զմարմնացու-
ցանէ ոչ միայն զընդ հովանեաւ իւրով եղեալսն, այլև զամ երկրպագուսն
քրիստոսի: Ընդ ՈՐՈՅ հովանաւորութեամբն և ազգս մեր կեայ լաւապէս և
պահպանութբ ՆՈՐԻՆ կենդանարար ապահով և աներկիւղ յամենայն
թշնամեաց: ՈՐՈՅ զդութն և զխնամս հանապազ տեսանէ, և զոր-
մունս վայելէ միշտ: Այլ և բաց 'ի յայտնելոյ հանապազորդակիւ և' հա-
սարակաբար շնորհակալութեան՝ 'ի ներկայումս և ևս գերազանցապէս զո-
ղորմութիւնս և զբարերարութիւնս եղեալ յատկապէս ազգիս մերոյ և մերում
անարժանութեանս՝ քան զարժանն մեր, լսելով աղերսանաց մերոց և կա-
տարելով զխնդիրս. յմ՝ ԽՐՈՎ գերազօր հրամանագրովն, և անպար-

տու

տեսլեան կրօնին՝ զաթոռս ամենայն հայոց զոր Լուսաւորիչն պատկերաւ փառաւորեաց. զազգս հայոց՝ իւրոյ ամենապայծառ Թագաւորութե՛ սիրելի եւ իւրայինն արձանագրեաց. եւ զանարժանութիւն մեր յատուկ սիրոյ եւ ողորմութե՛ նշանաւ՛ խնկապաղարդեաց եւ մխիթարեաց. Որք որովհետեւ այսքան դերազանց բարերարութեան ոչ ինչ կարեմք հատուցանել զփոխարէնն. վասն որոյ զայս քան բանս շարադրեցաք մի մեծապայծառ Տօնախմբութեան ՆՈՐԻՆ. եւ կանոնեցաք զի ազգս հայոց ուրեք գոն՝ ը օրհնել տէրութե՛ ՆՈՐԻՆ՝ ի յաւուրս շնորհալի տօնից ՆՈՐԻՆ՝ եկեղեցականօք եւ աշխարհականօք մեծաւ՛ հանդիսաւորութբ կատարեսցեն զայս կարգ. զոր ամենաթագաւորն ած ի փառս իւր համարելով լուիցէ, եւ ըզ խնդրուածս բազմութեան կատարեսցէ, ամէն.

Ի նուաստագոյն ծառայից ծառայ
Ներսեսեանցէ Աբրահամ Կաթողիկոսէ ամ
Հայոց եւ Արքեպս Լեհաստանի Լուսաւորչ
Իշխանածնէ.
Ի Լեւով քաղաքի 1771. ի Յու-
լիսի ամսոյ 10. յետ եկեալ.

Եւ յառաջ պատարագչին վառեսցեն զջահս և զաշտանակսն և զկանթեղս, և երկու դպիրք յառաջոյ սեղանոյն ընդ աջմէ և ընդ ահեկէ ունիցին զմոմեղէնս ՚ի ձեռս. յորժամ և անձնայն հանդերձ_կանք առնելով ընդ խորանաշէնք ատեանին շուրջ հովանեաւ կամ շրջապէս ելցեն յատեան: Եւ պատարագիչն ելեալ կայ Աջ Աւետարանաւ կամ վարդապետն և կամ առագ երէցն Աւետարանաւ՝ ընծայեալն ՚ի բեմ յատեան վերջին աստիճանն որ է. Սրբասացութիւն օրհնաց և մարգարէից. Երգելով՝ Օրհնեսցես զտէր. և Օրհնեալ եղիցին.

Աղաղակեսցէ սարկաւագն.

## Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Եւ պատարագիչն օրհնելով զխորանն ՚ի Բարձրեալն ասասցէ.

## Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Եւ առեալ զԲուրվառն խնկարկեսցէ նախ սեղանոյն և անձնայն եկեղեցւոյն յեկեղեցւոջ հոգևորականաց և ժողովրդականաց երկիցս կամ երիցս անգամ. յորժամ և հասեալ յատենին ... մեծաւ ՚ի մեծին երգել փառաց յարութիւն շարականն. դ. ձ. Ամենազօր Աստուած և այլն.

Իսկ ելեալ պատարագիչն կայ այլ ոք ՚ի հոգևորականաց՝ մերձ յառաջ պատարագչին զԳետագոութեան նախ ԱՋոք Աւետարան կամ վարդապետն և կամ առագ երէցն՝ և կամ այլ ոք յառաջնորդաց եկեղեցւոյն, և կայցէ յատենի ՚ի սեղանոյ խորան. Աւետարան առնելով ՚ի ձեռս զԳաւազան և զխաչ, և այլք զխաչ մեծայն. և յորժամ պատարագիչն աղօթեսցէ զաղօթսն: Սրբասացութիւն օրհնաց. և նա նախ՝ կայցէ առաջի յառաջոյ սեղանոյն առնելով զաւետարանն ՚ի գիրկն: յորժամ յառաջ մատուցեալ սարկաւագն առ Աջ Աւետ և կամ առ այլն զԳետագոութեան՝ թարգմանեսցէ: Եւ ևս խաղաղութեան: և նա արձակելով զխորանն արտաքս այնպէս՝ որպէս և գրեցեալ է.

Եւ առեալ զխնկարկութիւն մինչև ցլրումն շարականին՝ եկեալ կայցէ ՚ի սեղանոյ խորան.

## Շարական դ. ձ.

Ամենազօր ած և Թագաւոր յաւիտենից, որ ՚ի պատկեր քո երկնաւոր և անեղագործ Թագաւորութեան, հաստատեցեր յերկրի Թագաւոր ԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչն (կամ այլ անուն) ՚ի կառավարել և ՚ի պահպանել զքո ժողովուրդ. պահեա զսա անսասան և անպարտելի: Շնորհեա կենաց և պարգևեա խաղաղութեան և զօրացուցիչ քոյոց ծառայից. յաւել զկեանս խաղաղականս ՚ի քէն պսակեցեալ Կայսեր մերոյ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ Պաւլովիչի (կամ այլ անուն) և զօրացո ՚ի Թշնամեաց պատերազ

մի

մի 'ի փառս անուանդ և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ · յորում փառաւորի անզաղար տէրութիւնդ քո ։

Բարձրացո՛ տէր և փայլեցո՛ զգաւազան իշխանութեան ՍՈՐԼ. Է՛ ամ ծագս երկրի · ընդարձակեա՛ շաւաւիղք և հարաղատ ժառանգակցօք մինչև 'ի կատարած աշխար-



հի · այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զաւմենեսեան որք Է՛ իշխանութեամբ ՍՈՐԻ՛Ն ենթադրին · յորոց փառաւորի անզաղար տէրութիւնդ քո ։

Թագաւոր երկնաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագօղս անուանդ քում պահեա՛ 'ի խաղաղութեան ։

Ապա երգեն 'ի դպրաց գնալեան յորժամ մինն ասասցէ · Ալէլու" ալէլու" · Յա՛ մէջն · Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն և այլն ·

Յա՛ ասասցէ ձայն առ ձայն սաղմոսեսցեն մինչև ցեօթներորդ ձայնն ։

Ալէլուիա ալէլուիա ։

Դ. չափաւոր · Սաղմոս Դաւթի · Ի ·

Տէր 'ի զօրութե՛ քում ուրախ եղիցի թագաւորն · 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա · և զկամս շրթանց նորա ո՛չ արգելեր 'ի նմանէ ։

Քանզի արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո · և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի քարէ պատուականէ ։

Կեանս խնդրեաց 'ի քէն՝ և ետուր նմա Է՛ երկայն աւուրս յաւիտեանս յաւիտենից ։

Մեծ են փառք նորա 'ի փրկութե՛ քում · զփառս և զմեծ վայելչութիւն դիցես 'ի վերայ նորա ։

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից · և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց ։

Թագաւոր յուսացաւ 'ի տէր · յողորմութե՛ բարձրելոյն նա մի՛ սասանեսցի ։

Եւ յաւարտին սաղմոսացն՝ 'ի շուրջ եկեալ ասեն ձայն առ ձայն մի ըստ միոջ յառաջ մատուցեալ յորժամ ընթերցցին զշարակնոցն ընթերցուածն ·

Ընթերցուած Առակաց.

Գլ. լա. 1.

Ամենայն բանք այ խօսեցեալք են հրամանաւ Թագաւորի զոր խրատեաց մեզ մայր իւր: Բաց զբերան քո բանիւ այ, և դատեա զամենեսեան ողջմտութեամբ: Բաց զբերան քո և դատեա իրաւամբք, և խնդրեա և որոշեա զաղքատն և զտկարն: Փառք այ ծածկեն զբանս և փառք Թագաւորի պատուեն զհրամանս: Երկին բարձր և երկիր խոր, սիրտ Թագաւորի անքննին: Մերժ տես զանփորձ արծաթոյ և սրբելով սրբեսցի ամ: Սատակեա զամբարիշտս յերեսաց Թագաւորի, և ուղղեսցի արդարութեամբ աթոռն: Մի հպարտանար առաջի Թագաւորի և 'ի տեղիս մեծամեծաց մի մատչիր, զի լաւ է քեզ՝ թէ ասիցէ ոք 'ի վեր առ իս մատիր, քան թէ կորանիցես առաջի հզօրի:

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ.

Գլ. խե. 1.

Այսպէս ասէ տէր ած օծելոյն իւր Կիւրոսի, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս և զզօրութիւն Թագաւորաց խորտակեցից, բացից առաջի նորա զդրունս և քաղաքք մի փակեսցին. Ես երթայց առաջի քո զլերինս հարթեցից, և զդրունս պղնձիս խորտակեցից և զնիգս երկաթիս փշրեցից: Եւ տաց քեզ զգանձս խաւարինս և զաւանդս աներևոյթս բացից քեզ, զի ծանիցես թէ ես եմ տր ած՝ որ կոչեցի զանուն քո՝ ածն իսրայէլի: Վասն յակոբայ ծառայի իմոյ և իսրայէլի ընտրելոյ, ես կոչեցի քեզ զանուն քո՝ և ընկալայ զքեզ:

Պետրոսի Առաքելոյն 'ի Կաթուղիկեայց Առաջին Թղթոյն է ընթերցուած.

Գլ. Բ. 13.

Հնազանդ լերուք ամ մարդկեղէն ստեղծուածոյ վասն տն: Եթէ Թագաւորի, իբրև առաւել ումեք: Եթէ դատաւորաց՝ իբրև 'ի նմանէ առաքելոց, 'ի վրէժխնդրութիւն չարագործաց՝ և 'ի գովութիւն բարեգործաց: Զի այսպէս են կամք այ, բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մարդոյ զանգիտութի: Իբրև զազատս լինել՝ և մի իբրև զպատրուակ չարութե ունել զազատութին, այլ իբրև այ ծառայք: Զամենեսեան պատուեցէք, զեղբայրսիրութի սիրեցէք, յայ երկերուք, զԹագւորս պատուեցէք:

Պօղոսի Առաքելոյն 'ի Հռօմայեցւոց Թղթոյն է ընթերցուած.

Գլ. ԺԳ. 1.

Ամենայն անձն որ ընդ իշխանութ

է

է 'ի հնազանդութեն կացցէ · քանզի ոչ յուստեքէ է իշխանութիւն՝ եթէ ոչ յաստուծոյ · և որք են՝ յայ կարգեալ են ։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեն՝ այ հրամանին հակառակ կայ · և որք հակառակ կան · անձանց դատաստանս ընդունին ։ Զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց · կամիս չերկնչել յիշխանութէ անտի՝ զբարիս գործեա, և ընկալցիս գովութի 'ի նմանէ ։ Զի այ պաշտօնեայ է քեզ 'ի բարիս · ապա եթէ զչար գործիցես, երկիր · զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ը մէջ · զի այ սպասաւոր է՝ վրէժխնդիր 'ի բարկութի այնմ որ զչարն գործիցէ ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վս բարկութե, այլև վասն մտացն խղճի · վս այնորիկ և հարկս հարկանէք՝ զի այ սպասաւորք են 'ի նոյն կանխեալք ։ Արդ՝ հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկ՝ զհարկն · որում զմաքս՝ զմաքսն · որում զերկիւղ՝ զերկիւղն · որում զպատիւ՝ զպատիւն · և մի ումեք պարտապան գտանիցէք ։ Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամ առնել աղօթս խնդրուածս պաղատանս գոհութիւս վասն ամ մարդկան, մանաւանդ վս թագաւորաց և ամ իշխանաց ։ Զի խաղաղութ և հանդարտութ վարեսցուք զկեանս մեր ամ ածպաշտութեամբ և սրբութ · զի այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ այ ·

Ապա ասասցեն ժամասացքն 'ի ձայն 'ի Գոյ դասուն ։ սաղմոս ՃԹ · Բ

## Ալէլուիա ալէլուիա ։

Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր 'ի սիօնէ · և տիրեսցես դու 'ի մէջ թշնամեաց քոց ։

Եւ 'ի միւս դասուն նոյնպէս 'ի ձայն ·

## Ալէլուիա օրթի ։

Յայս ժամ եպիսկոպոսն կամ պատարագիչն կամ նախապատուին եկեղեցւոյն՝ որում պատշաճի կարդալ հանդիսի աւետարանն, այլ ոչ 'ի նախապատուիցն ժողովրդեան յառաջ մատուցեալ 'ի տեղի ընթերցուածոյն ասասցէ ·

## Խաղաղութիւն ամենեցուն ։

Յետ որոյ միոյ պատւոյ ժամաւորին ասասցէ.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Եւ յաւուրս նոյնն ասասցէ ժողովրդեան 'ի ձայն բարձր.

Ա~ Աւետարանս Յի Քի ըստ Մատթէոսի:

Եւ ժամաւորն միոյ պատւոյն նոյնպէս 'ի ձայն բարձր ասասցէ.

Երկիւղածութեամբ լուարուք.

Եւ 'ի միւս պատէ.

Փառք քեզ տէր Ած մեր.

Ապա ասասցէ ժողովրդեան նոյնպէս ձայնիւ.

Ա~ Տէրն մեր Յս Քս:

Եւ ժամաւորն միոյ պատւոյն գոչեսցէ բարձր ձայնիւ:

Պռօսխումէ:

Եւ միւսն 'ի հանդիպոյ նոյն նոյնպէս.

Ասէ Ած:

Յետ որոյ սկսանիցէ ժողովրդեան ընթերցանել զաւետարանն.

մատ'. գլ. իբ. 15.

Յայնժամ գնացին փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս գնկցեն նմա զորոգայթ բանիւք: Եւ առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց հերովդիանոսօքն հանդերձ և ասեն, վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն այ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ:

Ասա՝

Արդ՝ ասա մեզ՝ զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ Թէ ո՞չ: Գիտացեալ Յս զխորամանկութիւն նոցա, եւ ասէ՝ զի՞ փորձէք զիս կեղծաւորք: Ցուցէք ինձ զդահեկան հարկին. եւ նոքա մատուցին նմա դահեկան մի:

Եւ ասէ ցնոսա Յս. ո՞յր է պատկերս այս՝ կամ գիր. ասեն՝ կայսեր: Յայնժամ ասէ ցնոսա, Երթայք՝ տուք զկայսերն՝ կայսեր. եւ զԱյն՝ Այ: Իբրեւ լուան՝ զարմացան, եւ Թողին զնա եւ գնացին:

Եւ յետ [illegible] աւետարանին՝ քարոզեսցէ սարկաւագն բարձր ձայնիւ [illegible]:

Եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Եւ քահանայն հանդերձեալ [illegible] ասէ՝ [illegible]:

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.

Աստ անկցին ամենեքեան 'ի ծունկս, եւ այնպէս բարձրացեալ ամենեքեան 'ի վերայ ծնգաց [illegible] եւ ո՛չ նստեալ 'ի վերայ ոտից. նախ բարձրացուսցեն [illegible] Նշխարացն. [illegible] Աստուած երկնաւոր 'ի Գիրս նոյն [illegible] 'ի Միջոց Կաթողիկոսաց [illegible] Հայոց [illegible]:

Օրհնեալ ես Հայր անսկզբնական աստուա՛ծ ճշմարիտ անսկզբնաբար ծնող Որդւոյդ միածնի եւ բղխող Հոգւոյդ սրբոյ: Օրհնեալ ես Որդիդ միածին եւ բանդ Այ ճշմարիտ ծագեալդ Հօր եւ ո՛չ Հոգւոյն. ծնեալդ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս: Օրհնեալ ես Հոգիդ սբ Այ ճշմարիտ. բղխեալդ 'ի Հօրէ անժամանակապէս եւ անպատմաբար փառակից Հօր եւ Որդւոյն միածնի: Օրհնեալ ես Եռանձնեայ ամենասուրբ Երրորդութիւն անբաժանելի եւ մի աստուածութիւն համահաւասար եւ համագոյ մի էութիւն. մի բնութիւն. մի տէրութիւն. եւ մի իշխանութիւն. արարիչ եւ ստեղծօղ երկնաւորաց եւ երկրաւորաց. տեսօղ եւ նախախնամօղ կարգաւորիչ եւ զարդարօղ ամենեցունց: Ամենակալ ամենաբաւական ամենատոր ամենահարուստ ամենառատ ամենողորմ ամենագթած. Թագաւոր Թագաւորաց եւ Տէր տերանց որ միայն ունիս զան

զանմահութիւն և բնակեալ 'ի լոյս
անմատոյց․ որում հաւատամք խոս_
տովանիմք․ և երկիրպագանեմք յամ̃
յանձնէ յամ̃ զօրութ̃ յամ̃ սրտէ և
յամ̃ մտաց։ Քանզի դու ես Ած̃
մեր զօրով քոյով սեպհականաւ և
իւրականաւ փառօքդ փառաւորեալ
և քոյով ամենահարուստ բարութ̃բդ
զարդարեալ և անկարօտ իսկ այլոց․
ոչ կամեցար միայն ունել և վայելել
զանճառելի բարութի․ այլ որպ̃
որպէս թէ ստիպեցեալ 'ի քումմէ
անհնոյ բարերարութ̃ գոյացուցեր
յոչնչէ միով բանիւ արարչականաւ
զերկինսն վերինն և զ'ի նմին բնակիչ
զերկնայինս զանմարմինսն և զաներե_
ւոյթ էութիւնս հրեշտակականդ դա_
սուց, 'ի հաղորդել ըստ կարողութե
քումդ բարեաց և լինել փառաբա_
նիչ ամենափառաւոր թագաւորու_
թեանդ։ Սակայն և այդոքիւք ոչ
շատացեալ անսպառելի բարութ̃դ՝
յառաջ ածել գոյացուցեր յանէից
զերևելիս զայս զերկիր և զ'ի սմա
բնակիչ զերկրայինս զմարմնաւոր և
զնիւթեղէն էղելութ̃ս․ զորս և
զարդարեցեր երևելի և մարմնաւոր
բարութ̃ք։ Արդ տեսեր ամենատեսդ
Ած, զի ամենայնիւ անհաղորդք,
ամենամօտք, և ամենևին զատեալք
էին միմեանց՝ երկնայինքդ և երկ_
րայինքս․ և ոչ գոյր շաղկապ և միջ_
նորդ կցորդող․ և ընտանեցուցանող
երկուց տարակայեցելոց ծայրիցն․ և
մանաւանդ զբաւականն իսկ վայելող
ոչ գոյր երկրաւորացս բարեաց․ (զի
երկնայնոցդ էր և պատարուն փա_
ռաւորդ էութեանց հաստատեցելոցդ
յամենահարուստ բարութէդ՝ ոչ ինչ
էր կարօտութի և պակասութի․) մին՝
առ 'ի ցուցանել զամենակարող և
զամենասքանչ զօրութիւնդ․ ստեղծեր
զմարդս բանական՝ ամենասուրբ
ձեռօքդ 'ի հոգւոյ իմանալւոյ և 'ի
մարմնոյ զգալւոյ ըստ պատկերի, և
ըստ նմանութեան ստեղծողիդ, և
կացուցեր զնա տէր և իշխան 'ի վր̃
երկրի և երկրականացս հնազանդ
առնելով նմա զամ̃․ և 'ի պատիւ
պատկերինդ՝ դերազանցապէս զար_
դարեցեր զնա մեծամեծք յատկական
շնորհիւք, և եդեր 'ի մէջի երկուց
աննմանիցն ծայրից շաղկապ և միա_
ւորիչ․ և վայելող երկուցն փառաց
և բարութեանց։ Զի ըստ հոգւոյն՝
զհոգևորացն և զերկնայնոցն բերցէ
զնմանութիւն․ և նոքօք զմայլեսցի․
իսկ ըստ մարմնոյն զերկրաւորացս
վայելեսցէ զբարութի։ Արդ՝ մնա_
լոց էր մարդս 'ի յայս երջանիկ կա_
ցութե և ունելոց էր զայս յատկա_
կան պատիւս և գերազանցագունեղ
իշխանութի 'ի մէջ ամենից ստեղծ_
ուածոց քոց մշտապէս․ եթէ ըստ
նմա

նմանութեան ամենաստեղծ Թագաւորին , ՚ի յողորմութիւն և յերանունս լցեր պահել զաթոռ Թագաւորութեն իւրոյ ։ Բայց սակայն Թողեալ զնմանութի ստեղծողին , և զսէր երկնայնոցդ վայելչութեց պատրանօք նախաչարին . յարեցաւ ՚ի մարմնաւորս կոյս , և սոքօք համարեցաւ միայն շատանալ նմանելով անասնոց և անբանից ըստ մարդարէին . և խապառ մոռացաւ զկամն զօրէնս և զդատաստան քո ։ Այնուհետև զերկրաւորս հաղէ կացոյց գիտել . և որ ինչ առ յաստ իւր կայր . աշխատութե գտանել ըստ իմաստնոյն ։ Իսկ զքոյդ և զերկնաւորացդ խորհուրդ որպէս կարէր գիտել ։ Արդ՝ այս Թշուառաբեր զխոլոռածս և անողջանալի հիւանդուԹս որոյհետև հանրական էր . և բոլորի բնութե մարդոյս էր տիրեալ . ոՏ այնորիկ հանրաւորացդ և ամենազօր բժշկի կարօտանայր ։ Վասն որոյ հարկեցեալ ՚ի մարդասիրական գԹոյդ , հայր երկնաւոր ած , առաքեցեր զմիածին որդիքո զամենազօր բժիշկդ ՚ի յայս քումդ պատկերի ։ Որոյ և եկեալ փրկական անօրէնութեըն իւրով՝ ազատեաց զբոլոր բնութիս մեր ՚ի համբաստարած հիւանդութէն . և ՚ի գերութեն նախաչարին . և ծանոյց մեզ զքեզ ճշմարիտ ած . և եցոյց մեզ զքոյդ զօրէնս և զդատաստանըս . ուսոյց մեզ զերկնայինդ ճանապարհ , խոստանալով զառաջինն երջանկութիւն՝ և պատուիրեաց եւս՝ ասելով թէ՝ ահաւասիկ ողջացար , մի եւս մեղանչիցես . զի մի եւս պատահիցի քեզ այդ Թշուառութի ։

Արդ՝ մք բարերար ած , և հայր ամենակալ . Թէպէտ և եւս բազմապատիկս արար մեզ բարերարութի և եցոյց զամենաստուաս մարդասիրուԹիւդ . սակայն՝ գոլով մեր մարմնոյ երկրաւորի պատահէր . և ՚ի Թիւրս զերաշարժ մտաց մխճուեցեալ . դժուարաւ կարէաք զերկնայնոցդ խոկալ միշտ . և ՚ի մտի ունել զքոյդ արդար դատաստան ։ Եւ մանաւանդ զու ամենակալ Թագաւորդ մեր , և քոյդ դատաստան գոլով աներևոյթ և անտեսանելի ՚ի մէնջ . և նստեալ այժմ ՚ի յողորմութեդ յաթոռ՝ ոչ միշտ ՚ի գործ ածես զարդարութիդ երևելապէս . ոՏ որոյ՝ հաստատեցեր յերկիր զերկրաւոր և զմարմնաւոր Թագաւորս . որոց և զխրա ՚ի ձեռինդ ունելով ազդես ՚ի միտս նոցա զիրաւունս և զկամս քո . և շարժես երևելապէս ՚ի վրէժխնդրուԹի չարագործաց , և ՚ի յապահովութի և ՚ի խնամողութի բարեգործաց ։ Զորս տեսանելով՝ հար-

քըն բարեխօսչին • եւ բարիքն աւետչին • եւ մանաւանդ այնու 'ի մեաբերեալ խաղաղեն զքումն աւետղաստատանեղ ։ Ո՛չ մի միայն այսր աղաղաւ • այլեւ 'ի պաշտպանութիւն եւ 'ի յապահովութիւն հաւատացեալցս քոց 'ի յարձակմանց անօրինաց եւ 'ի թշնամեաց եկեղեցւոյ քում սրբոյ ։ Որ եւ ըստ այդմ բարերար կամացդ, յատկապէս ողորմելով մեզ նուաստ եւ անարժան ծառայիցս քոց • շնորհեցեր մեզ եւ երկրիս մերոյ Թագաւոր (զմեծ Կայսրըն ամ Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչն) զՈՐՈՑ այսօր ծննդեան յիշատակըն ✠ տօնախմբելով մեծաւ հանդիսաւորութ. • զուարճանամք եւ ուրախանամք ընդ հոգւոյ եւ ընդ մարմնոյ ։ Արդ՝ ով բարերար եւ ողորմած աստուած մեր • մեք յանձնեալ եւ անարժան ծառայքս քո՝ զի՞նչ տացուք անկարօտիդ փոխարէն եւ զփոխարէն այսքանոյ անհնոյ բարերարութեանդ քո • զոչ այլ ինչ ունիմք եւ կարեմք, բայց միայն զփառս, զգոհութիւն, եւ զերկրպագութիւն՝ հանդերձ մեծաւ շնորհակալութ. վերառաքեսցուք քեզ 'ի բարձունըս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ յամենայն ժամ եւ յաւիտեանս յաւիտենից •

Ամէն ։

Խաղաղութեան աղօթքն •

Եւ՛ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի քո եւ մեծաւ պաղատանօք հայցեմք յամենասուրբ յողորմութ. քումմէ (ով Ած մեր) զի շնորհեսցես զՍԱ մեզ (զԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչ ամենողորմած Կայսրն ամ Ռուսաց) ընդ երկայն աւուրս արդարադատ եւ խաղաղաւոր Թագաւորութ., յատկապէս շնորհք,

ողոր

✠ Եթէ հանդիսին ծննդեանն իցէ, այնպէս պարտ է ասել որպէս եւ գրեալն է 'ի շարքն խորան • այլ եթէ իցէ վասն այլ տօնախմբութեանց՝ ըստ որում պատշաճին պարտ է ասել • զոր օրինակ Անուանակոչութեան յիշատակն • կամ յաթոռ բազմելոյն յիշատակն •

Բայց եթէ Թագադրութեան իցէ յիշատակն՝ այսպէս արժան է ասել •

Թագաւոր (զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչն եւ մեծ Թագուհի եւ Կայսրուհի ԵԼԻՍԱՎԵՏ Աղեքսիեվնայն •) ՈՐՈՑ այսօր Թագադրութեանց յիշատակն տօնախմբելով •

(Ու այլն որ 'ի շարքն •)

ողորմութեն և օգնականութեն քո ան-
պակաս արասցես 'ի ՍՄԱՆԷ: որովք կացցէ և մնասցէ ՍԱ. անխախտ հոգւով. քերդահաճոյ փառուք. ւք և ուղղադէտ մտօք. բերկրեալ սրտիւ. զուարթ և ուրախ դիմօք. առողջ և յամենայնէ փառանդէ ազատ մարմնով 'ի կեանս իւր մինչև 'ի կէտ կոչմանն իւրոյ. և յետ առաւօտացս, տացես ՍՄԱ. զանվախճան և զ յաւիտենական թագաւորութիւն ընդ ամ սրբս քոյ: Այլ և արասցես զՍԱ. լինել հանճարեղ 'ի խորհուրդս, ճշմարիտ և իմաստուն 'ի բանս. խոհեմ և շըրջանկատ 'ի գործս. արդարակշիռ 'ի դատաստանս, ներող և անյիշաչար 'ի յերբեմնական և 'ի զղջունակ յանցաւորս. վրէժխնդիր և անաչառ յանդգնեղջ և 'ի մէջ չարագործս, ողորմած և քաղցր 'ի յաղքատս, 'ի տնանկս, 'ի յորբս և յայրիս. սիրող և խնամածու սիրելեաց և հընազանդելոց իւրոց. ահարկու և երկիւղալի թշնամեաց իւրոց:
Օ՜ թագաւորութի ՍՈՐԱ. յաղթօղս. զօրաւորս և անպարտելիս արասցես 'ի վերայ ամ թագաւորութեանց. ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուսցէ զՍԱ. զԹշնամիս ՍՈՐԱ. հալածականս արասցես. և զյարուցեալսն 'ի վեր ՍՈՐԱ. 'ի ներքոյ ոտից ՍՈՐԱ. արկցես: Դո ամն. յաղթ զօրութեամբք և ոյժ խաչիդ նշանաւն ամրացուսցես և պարսպեալ պահպանեսցես զՍԱ. և զԹագաւորութիւն ՍՈՐԱ. յամենից յերեւելեաց և յաներեւութից թշնամեաց: Աճեցուսցես և պտղաբերս արասցես զՍԱ. արքայազնօք և քոյապարգեւ զաւակօք: Անպակասելի և անթառամելի արասցես ընդ թագաւորութի ՍՈՐԱ. յազգէ յազգ՝ և յորդւոց յորդիս մինչև 'ի կատարած աշխարհի: Օրհնեսցես զԹագաւորս (մեր զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց զԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչն. ՈՐՈՅ այսօր ծննդեանն է յիշատակ.) (Իսկ այլոցն ըստ նշանակեցելոց հերթին յառաջին ծանօթն 'ի վերոյ:) և զԹագաւորութի ՍՈՐԱ. զյարկ և զընակութի ՍՈՐԱ. զժառանգաւորս. զծընունդս, զազգս և զամ ընտանիս ՍՈՐԱ: Օրհնեսցես զամ հաւատարիմ և զսրտացաւ գործակալս ՍՈՐԱ. զնախարարս, զիշխանս, զկուսակալս. զօրավարս և զամ զօրս ՍՈՐԱ: զօրացուսցես և արիացուսցես 'ի պատերազմունս թըշնամեաց. որոց մինն զհազարս նոցա հալածեսցէ, և երկուքն զբիւրս նըհարեսցէ: Դու լիցիս սոցա մարտա-

կեց և զխնամարկուս՝ ոչ լինելոյ ընդ մահուն. ի յետուրս. ի զաւթի. և ընդ այլոց ծառայից քոց: Օրհնեսցես զամենեսեան որք են եկեղեցւոյ ՍՈՐԱ կան. զեկեղեցականսն և զաշխարհականսն. զմեծամեծս և զփոքունսն, զարս և զկանայս, և զամենայն ժողովուրդս ՍՈՐԱ: Օրհնեսցես զմեզ կարօտեալս և զերկիր և զքաղաք ՍՈՐԱ զբնակութիւն և զբնակիչս: Ուոց ամենեցունց տացես կեալ և մնալ առաքինական վարուք և բարեպաշտական կենցաղավարութեամբ. ի հաճոյից քոց. հաստատութեամբ և մաքրութեամբ, խոնարհութեամբ և հնազանդութեամբ առ Թագաւորս մեր. և սիրով և խաղաղութեամբ առ միմեանս: Նոյնպէս և զսէրս քրիստոնեայ Թագաւորիս մերոյ (ԱԼԷՔՍԱՆԴՐ Պաւլովիչի) քաղցր և գթած պահեսցես առ ամ աստուածապետեալն իւր. և մնասցեն առ. խղճալի ազգս հայոց. ի ՈՐՈՑ հովանաւորութեամբն մնալով 'ի խաղաղութեան, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Ամէն.

Եւ յաւարտ աղօթիցն յորժամ հասցեն ամենեքեան, և ունկնդիր եղիցին ընթերցողին հրովարտակին, ասասցէ:

Յետոյ հարուցեալ ատրիտոտերանցն յորժամ միաբան 'ի միասին երգեսցեն հայնքն բրդ հարցն եկեղեցական Ռեփորոյ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Եւ պատարագողն երգեսցեն դպիրքն:

Տէր ողորմեա:

Ապա 'ի վերուստ խաղաղութեան աշխարհիս և օգնականութեան Թագաւորի մերոյ (ԱԼԷՔՍԱՆԴՐ Պաւլովիչի) զՏէր աղաչեսցուք:

Ողորմեա մեզ Տէր Ած մեր ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Եւ պաշտօնեայքն երգեսցեն նոյնպէս երիցս ։

Տ՛էր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Յորժամ սարկաւագապետն երգեսցէ տաղս ձայնիւ մեծաւ ։

Ամէն ։

Եւ դպիրքն առ հասարակ, կամ որք ատենին շնորհընկալք ՚ի ձեռն երգեսցեն նոյնպէս տաղս ձայնիւ ։

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա ։

Եւ յաւարտ ալէլուիային՝ օրհնեսցէ հանդիսադիրն․ եւ ընդ նմա պաշտօնեայքն ամենեքեան՝ ասասցեն զա- ղօթս մեծաշնորհութեանն ։

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Թագաւորութիւն ամենաբարեպաշտ ինքնակալ մեծ Թագաւորի և Կայսեր մեր Ռուսաց ԱԼԷՔՍԱՆԴՐԻ Պաւլովիչի․ այս նշանաւ որ խաչիւս և որ Աւետարանաւս և աւուրս շնորհիւ․ անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Սարկաւագունքն երգեսցեն ։

Ամէն ։

Հասարակութիւնն դպրաց կամ ժողովրդեան ։

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա ։

Եւ այսպէս կրկնեսցեն երիցս կարգաւ անշարժութեամբ ՚ի նմին տեղւոջ․ եւ յաւարտ երրորդին ասասցեն մեծաւ սարկաւագունքն ։

Ամէն

Ամէն ։

Յորժամ պատարագեալքն ասասցեն ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Յետ որոյ ժողովուրդն ասասցեն ։

Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ ․ ամենակալ Տէր Ած մեր կեցո և ողորմեա ։

Եւ չորրորդին հանգստին՝ ասասցէ դպիրն ։

Պահպանեա Քրիստոս Աստուած զԹագաւորն մեր զինքնակալ Կայսրն մեծ Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐ Պաւլովիչն (Եւ եթէ ունիցի ընդ իւր զոյգ և թագուհին, յիշեսցէ առաւելապէս և զանուն նորին ։) և զԹագաւորութիւն ՆՈՐԱ ․ և զմեզ զժողովուրդս քո ընդ հովանեաւ քո և պատուական Խաչի քո ՚ի խաղաղութեան փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեաց ․ արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Յետ որոյ ։

Օրհնեալ Տէր մեր Յս Քս ։

Երգեն ։

Ամէն ։

Կատարածն հանգստին ։



Պետ. Հանրային Գրադարան / Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна / Ա. Մյասնիկյանի անվան

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս:

Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց Սբ. Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ.
և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ.
Ամէն:

## ԿԱՏԱՐԵՑԱՒ.



Гос. Публ. Библиотека
ССРА

ՀՀ Ազգային գրադարան
NL0108225